ՀՀ Արագածոտնի մարզպետ Սարգիս Սահակյանի շնորհավորական ուղերձը Գիտելիքի օրվա եւ Սեպտեմբերի 1-ի կապակցությամբ

Սիրելի հայրենակիցնե՛ր, շնորհավորում եմ բոլորիս՝ Գիտելիքի օրվա և 2015-2016 ուսումնական տարվա մեկնարկի կապակցությամբ: Տոնը, հիրավի, համաժողովրդական է, քանզի գիտելիքի հանդեպ սերն ու ուսումնառությունը հայ մարդու արյան մեջ են, նրա նկարագրի անբաժան մասը:

Բոլոր ժամանակներում մեր ժողովուրդը զենքի հետ մեկտեղ գիտելիքի ուժով է հաղթել թշնամուն, գիտությամբ գրավել նորանոր բարձունքեր, ինքնահաստատվել միջազգային հարաբերություններում:

Ահա թե ինչու, նոր ուսումնական տարվա առաջին օրը՝ սեպտեմբերի 1-ը, մենք մեկտեղել ենք Գիտելիքի օրվա հետ և հաստատուն տեղ հատկացրել երկրի պետական տոնացույցում: Գիտելիքի ուժի կարեւորության գիտակցմամբ՝ այսօր մեր երկրի ղեկավարությունը, հասարակական բոլոր շերտերը համատեղել են նպատակները գիտության և կրթության արժեհամակարգի ամրապնդման, մանկավարժի և գիտության մարդու նկատմամբ հարգանքի արմատավորման, կրթված և գիտելիքի վրա հիմնված հասարակության կայացման համար:

Շնորհավորում եմ բոլոր աշակերտներին և ուսանողներին, նրանց ուսուցիչներին, դասախոսներին, ծնողներին: Մաղթում եմ նորանոր հաջողություններ և արդյունավետ ուսումնական տարի:

ՀՀ Արագածոտնի մարզպետ՝ **ՍԱՐԳԻՍ ՍԱՀԱԿՅԱՆ**